

Երեխաների որդեգրման մասին եվրոպական կոնվենցիայի նախագիծ (վերանայված)

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և մյուս ստորագրող կողմերը,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամ պետությունների միջև առավել սերտ միասնության հասնելն է՝ իրենց ընդհանուր ժառանգությունը հանդիսացող գաղափարների և սկզբունքների պահպանման ու իրականացման նպատակով,

նկատի ունենալով, որ չնայած երեխաների որդեգրման ինստիտուտը գոյություն ունի Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների իրավունքում, այնուամենայնիվ, այդ երկրներում դեռևս առկա են որդեգրումը կարգավորող սկզբունքների վերաբերյալ տարակարծություններ և որդեգրման ընթացակարգերի ու իրավական հետևանքների տարբերություններ,

հաշվի առնելով «Երեխայի իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության 1989 թվականի նոյեմբերի 20-ի կոնվենցիան և, մասնավորապես, դրա 21-րդ հոդվածը,

հաշվի առնելով «Երեխաների պաշտպանության և միջպետական որդեգրման ոլորտում համագործակցության մասին» 1993 թվականի մայիսի 29-ի Հասագայի կոնվենցիան,

հաշվի առնելով միջազգային որդեգրման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1443 (2000) առաջարկության հիմնական նպատակը՝ երեխաների իրավունքները հարգելը, ինչպես նաև հայրությունը (մայրությունը) որոշելուն և դրա իրավական հետևանքներին վերաբերող սկզբունքների մասին Եվրոպայի խորհրդի Մպիտակ փաստաթուղթը,

գիտակցելով, որ 1967 թվականի Երեխաների որդեգրման մասին եվրոպական կոնվենցիայի (ETS No. 58) որոշ դրույթներ կորցրել են իրենց արդիականությունը և հակասում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին,

գիտակցելով, որ երեխաների ներգրավումը՝ վերջիններիս վրա ազդեցություն ունեցող ընտանեկան գործերով վարույթներում բարելավվել է 1996 թվականի հունվարի 25-ի՝ Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիայով (ETS No.160) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով,

նկատի ունենալով, որ երեխաների որդեգրման վերաբերյալ վերանայված ընդհանուր սկզբունքների և գործելակերպի ընդունումը, հաշվի առնելով վերջին տասնամյակներին այս ոլորտում տեղի ունեցած համապատասխան զարգացումները, կօգնի նվազեցնել ներպետական իրավունքների միջև առկա տարբերություններից բխող դժվարությունները և միաժամանակ կնպաստի որդեգրվող երեխաների շահերի պաշտպանությանը,

համոզված լինելով, որ անհրաժեշտ է ստեղծել երեխաների որդեգրման մասին Եվրոպայի խորհրդի վերամշակված միջազգային փաստաթուղթ, որն արդյունավետ կերպով կլրացնի մասնավորապես 1993 թվականի Հասագայի կոնվենցիան,

գիտակցելով, որ առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնել երեխայի շահերին,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Մաս I – Կոնվենցիայի գործողության ոլորտը և դրա սկզբունքների կիրառումը

Հոդված 1 – Սկզբունքների կիրառումը

Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ կլինեն սույն Կոնվենցիայի դրույթներին իր իրավունքի համապատասխանությունն ապահովելու համար և այդ նպատակով ձեռնարկած միջոցների մասին ծանուցում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

Հոդված 2 – Կոնվենցիայի գործողության ոլորտը

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է այն երեխայի որդեգրման նկատմամբ, որի 18 տարին դեռ չի լրացել, որն ամուսնացած չէ և չի եղել, **նրա միությունը գրանցված չէ ու գրանցված չի եղել** և անչափահաս է՝ որդեգրողի՝ նրան որդեգրելու համար դիմելու պահին:¹
2. Սույն Կոնվենցիան կարգավորում է միայն որդեգրման այն իրավական ինստիտուտները, որոնցով ստեղծվում են երեխա-ծնող մշտական հարաբերություններ:

Մաս II – Ընդհանուր սկզբունքներ

Հոդված 3 – Որդեգրման վավերությունը

Վավեր է միայն դատարանի կամ վարչական մարմնի (այսուհետ՝ «իրավասու մարմին») կատարած որդեգրումը:

Հոդված 4 – Որդեգրման կատարումը

1. Լիազորված մարմինը չի կատարում որդեգրումը, քանի դեռ համոզված չէ, որ որդեգրումը բխում է երեխայի շահերից:
2. Յուրաքանչյուր դեպքում իրավասու մարմինը հատուկ ուշադրություն է դարձնում որդեգրման միջոցով երեխային կայուն և ներդաշնակ ընտանիքով ապահովելու կարևորությանը:

Հոդված 5 – Որդեգրման համար համաձայնությունը

1. Սույն հոդվածի 2-րդ և 5-րդ պարբերությունների պահանջների պահպանմամբ՝ որդեգրումը կատարվում է, միայն եթե տրվել են և հետ չեն վերցվել առնվազն հետևյալ համաձայնությունները՝
 - ա. մոր և հոր համաձայնությունը, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ իրենց փոխարեն համաձայնություն տալու իրավասություն ունեցող որևէ անձի կամ մարմնի համաձայնությունը,
 - բ. երեխայի համաձայնությունը, որն օրենքով բավականաչափ գիտակից է համարվում: Երեխան համարվում է բավականաչափ գիտակից, եթե նա հասել է օրենքով սահմանված տարիքին, որը չի կարող գերազանցել 14 տարեկանը,
 - գ. որդեգրողի ամուսնու կամ գրանցված գուզընկերոջ համաձայնությունը:

¹ Միացյալ Թագավորության պատվիրակության կողմից առաջարկված փոփոխություն (տե՛ս թիվ DD(2007)187 փաստաթուղթը, թվագրված 2007 թվականի ապրիլի 3-ին): Առաջարկն ընդունելի է համարվել:

2. Այն անձինք, որոնց համաձայնությունը պահանջվում է որդեգրման համար, պետք է ըստ անհրաժեշտության խորհրդատվություն ստանան և պատշաճ կերպով տեղեկացվեն իրենց համաձայնության հետևանքների մասին, մասնավորապես՝ արդյո՞ք որդեգրումը կհանգեցնի երեխայի և նրա կենսաբանական ընտանիքի միջև իրավահարաբերությունների դադարեցմանը:

Համաձայնությունը պետք է տրված լինի կամավոր, պահանջվող իրավական ընթացակարգով և արտահայտված կամ հաստատված լինի գրավոր ձևով:

3. Իրավասու մարմինը չպետք է շրջանցի առաջին պարբերությամբ նշված որևէ անձի կամ մարմնի համաձայնության պահանջը կամ չընդունի համաձայնություն տալու մերժումը՝ բացառությամբ օրենքով սահմանված բացառիկ հիմքերի առկայության դեպքում:

Այդուհանդերձ, եթե երեխայի հաշմանդամությունը գրկում է նրան վավեր համաձայնություն տալու հնարավորությունից, ապա նրա համաձայնության պահանջը կարող է չկատարվել:

4. Եթե հայրը կամ մայրը չունեն երեխայի նկատմամբ ծնողական իրավունքներ կամ որդեգրման համար համաձայնություն տալու իրավունք, օրենքով կարող է սահմանվել, որ հոր կամ մոր համաձայնությունն անհրաժեշտ չէ:

5. Իր երեխայի որդեգրման համար մոր համաձայնությունը²² համարվում է վավեր, եթե այն տրվում է երեխայի ծննդից այնքան ժամանակ անց, որը սահմանվում է օրենքով և չի կարող պակաս լինել վեց շաբաթից, իսկ եթե այդպիսի ժամկետ չի սահմանվում՝ այնքան ժամանակ անց, որն իրավասու մարմնի կարծիքով հնարավորություն կտա մորը բավարար չափով վերականգնվել ծննդաբերության հետևանքներից:

6. Սույն Կոնվենցիայի նպատակներով՝ «հայր» և «մայր» նշանակում են անձինք, ովքեր օրենքի համաձայն համարվում են երեխայի ծնողները:

Հոդված 6 – Երեխայի հետ խորհրդակցությունը

Եթե 5–րդ հոդվածի 1–ին և 3–րդ պարբերությունների համաձայն, երեխայի համաձայնությունն անհրաժեշտ չէ, նրա հետ, հնարավորության սահմաններում, պետք է խորհրդակցել և հաշվի առնել նրա կարծիքն ու ցանկությունները՝ նկատի ունենալով նրա հասունության աստիճանը:

Նման խորհրդակցություն չի անցկացվում, եթե այն ակնհայտորեն հակասում է երեխայի շահերին:

Հոդված 7 – Որդեգրման պայմանները

1. Օրենքը թույլ է տալիս երեխայի որդեգրումը՝

ա. տարբեր սեռի երկու անձանց կողմից.

i. որոնք ամուսնացած են իրար հետ, կամ

ii. եթե առկա է նման համակարգ՝ նրանց միությունը գրանցված է³

² Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 266 (2007) եզրակացության 6.1 պարբերությամբ առաջարկվում էր «Իր երեխայի որդեգրման համար մոր համաձայնությունը» բառերը փոխարինել «Իրենց երեխայի որդեգրման համար մոր և, հնարավորության դեպքում, հոր համաձայնությունը» բառերով: Սա անընդունելի է համարվում, քանի որ հոր համաձայնությունն արդեն իսկ կարգավորվում է սույն հոդվածով, իսկ 5–րդ պարբերությամբ հատուկ պաշտպանություն է տրամադրվում մորը՝ ծննդաբերությանը հաջորդող կարճ ժամանակահատվածում:

³ Թիվ 266 (2007) եզրակացության 6.2 պարբերություն. Խորհրդարանական վեհաժողովն առաջարկել է 1.ա պարբերության գործողությունը տարածել նաև այն անձանց վրա, ովքեր ապրում են միմյանց հետ և ունեն կայուն հարաբերություններ: Սա անընդունելի է համարվում, քանի որ այդ հնարավորությունը տրվել է անդամ

բ. մեկ անձի կողմից:

2. Պետություններն ազատ են սույն Կոնվենցիայի գործողությունը տարածելու նույն սեռի զույգերի վրա, ովքեր ամուսնացած են իրար հետ կամ որոնց միությունը գրանցված է: Նրանք ազատ են նաև սույն Կոնվենցիայի գործողությունը տարածելու տարբեր և նույն սեռի այն զույգերի վրա⁴, որոնք ապրում են միմյանց հետ և ունեն կայուն հարաբերություններ:

Հոդված 8– Հետագա որդեգրման հնարավորությունը

Օրենքով չպետք է թույլատրվի որդեգրված երեխայի հետագա որդեգրում՝ բացառությամբ հետևյալ հանգամանքներից մեկի կամ մի քանիսի առկայության դեպքում.

ա. եթե երեխան որդեգրվում է որդեգրողի ամուսնու կամ գրանցված զուգընկերոջ կողմից.

բ. եթե նախկին որդեգրողը մահացել է.

գ. *եթե որդեգրումն անվավեր է ճանաչվել.*

դ. եթե նախկին որդեգրումը դադարում է կամ կդադարի հետագա որդեգրմամբ.

ե. եթե հետագա որդեգրման համար առկա են լուրջ հիմքեր և նախկին որդեգրումն օրենքով չի կարող վերացվել:

Հոդված 9 – Որդեգրողի նվազագույն տարիքը

1. Երեխան կարող է որդեգրվել, եթե լրացել է որդեգրողի՝ օրենքով սահմանված նվազագույն տարիքը, ինչը չպետք է լինի 18 տարեկանից ցածր և 30 տարեկանից բարձր: Որդեգրողի և երեխայի միջև պետք է լինի տարիքային պատշաճ տարբերություն և, հաշվի առնելով երեխայի շահերը, նախընտրելի է, որ այն լինի առնվազն 16 տարի:

2. Այդուհանդերձ, ելնելով երեխայի շահերից, օրենքը կարող է թույլ տալ չկիրառել նվազագույն տարիքի կամ տարիքային տարբերության պահանջը՝

ա. եթե որդեգրողը երեխայի հոր կամ մոր ամուսինն է, կամ գրանցված զուգընկերը, կամ

բ. բացառիկ հանգամանքներում:

Հոդված 10 – Նախնական ուսումնասիրությունները

1. Իրավասու մարմինը որդեգրումը չի կատարում մինչև որդեգրողի, երեխայի կամ նրա ընտանիքի վերաբերյալ պատշաճ ուսումնասիրության անցկացումը: Նման ուսումնասիրությունների ընթացքում և դրանցից հետո տվյալները կարող են հավաքվել, մշակվել և փոխանցվել միայն անհատական տվյալների պաշտպանության և մասնագիտական գաղտնիքի մասին նորմերի համաձայն:

պետություններին 2–րդ պարբերությամբ: Եթե նման պահանջ ներառվեր 1.ա պարբերությունում, մի շարք պետություններ դեմ կլինեին սույն տեքստին:

⁴ Թիվ 266 (2007) եզրակացության 6.3 պարբերություն. Խորհրդարանական վեհաժողովն առաջարկել էր հանել հետերասնեքսուալ զույգերի մասին 1–ին պարբերությունում արված նշումը: Այդուհանդերձ, քանի որ Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեն (ԻՀԵԿ) չի ընդունել եզրակացության 6.2 պարբերության առաջարկը, ԻՀԵԿ–ն այս անհարկի առաջարկը նույնպես համարում է անընդունելի:

2. Այնքանով, որքանով դա պահանջում է յուրաքանչյուր դեպքը, ուսումնասիրությունները, հնարավորության դեպքում և *մասնավորապես*, վերաբերում են հետևյալ հարցերին՝
 - ա. որդեգրողի անձին, առողջությանը և սոցիալական միջավայրին, նրա կենսապայմաններին և երեխա դաստիարակելու կարողությանը.
 - բ. որդեգրողի՝ երեխային որդեգրելու ցանկության դրդապատճառներին.
 - գ. եթե ամուսիններից կամ գրանցված զուգընկերներից միայն մեկն է դիմում երեխա որդեգրելու համար, ապա մյուսի՝ դրան չմիանալու պատճառին.
 - դ. երեխայի և որդեգրողի համապատասխանությանը և այն ժամկետին, որի ընթացքում երեխան գտնվել է նրա խնամքի տակ.
 - է. երեխայի անձին, առողջությանը և սոցիալական միջավայրին և, օրենքով սահմանված սահմանափակումների պահպանմամբ, նրա ծագմանն ու քաղաքացիական կարգավիճակին.
 - զ. որդեգրողի և երեխայի էթնիկ, կրոնական և մշակութային ծագմանը:
3. Այս ուսումնասիրությունների կատարումը վերապահվում է օրենքով կամ իրավասու մարմնի կողմից այդ նպատակով լիազորված անձին կամ մարմնին: Դրանք, հնարավորության դեպքում, կատարվում են սոցիալական ոլորտի աշխատողների կողմից, որոնք որակավորված են այս ոլորտում՝ ուսուցման կամ փորձառության արդյունքում:
4. Սույն հոդվածի դրույթները չեն ազդում իրավասու մարմնի՝ այս ուսումնասիրությունների շրջանակում կամ դրանից դուրս այնպիսի տեղեկության կամ ապացույցների ձեռքբերման լիազորության կամ պարտականության վրա, որոնք, նրա կարծիքով, կարող են օգտակար լինել:
5. Որդեգրողի՝ որդեգրելու համար համապատասխանության և որդեգրելու իրավունքի, համապատասխան անձանց վերաբերող հանգամանքների ու դրդապատճառների և երեխայի տեղավորման նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրությունները կատարվում են մինչև երեխային՝ որդեգրման նպատակով ապագա որդեգրողի խնամքին հանձնելը:

Հոդված 11 – Որդեգրման հետևանքները

1. Որդեգրումից հետո երեխան դառնում է որդեգրողի(ների) ընտանիքի լիիրավ անդամ և որդեգրողի(ների) և նրա կամ նրանց ընտանիքի նկատմամբ ունի նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ որդեգրողի(ների) երեխան, որի նկատմամբ հայրությունը (մայրությունը) իրավաբանորեն որոշվել է: Որդեգրողը(ները) երեխայի նկատմամբ ունեն ծնողական իրավունքներ: Որդեգրումը դադարեցնում է երեխայի և իր կենսաբանական հոր, մոր և ընտանիքի միջև իրավահարաբերությունները:
2. Այդուհանդերձ, որդեգրողի ամուսինը կամ զուգընկերը, գրանցված լինելու կամ չլինելու դեպքում,⁵ պահպանում է որդեգրված երեխայի նկատմամբ իր իրավունքներն ու պարտականությունները, եթե վերջինս իր երեխան է, և եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

⁵ Թիվ 266 (2007) եզրակացության 6.4 պարբերություն. Խորհրդարանական վեհաժողովի առաջարկը՝ ներառել «չամուսնացած զուգընկերը՝ պայմանով, որ զույգը միասին է ապրում և ունի կայուն հարաբերություններ» 7-րդ հոդվածի 1. ա պարբերությունում փոփոխություն կատարելու առաջարկի հետևանքն է: 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում լրացում կատարելու առաջարկն անընդունելի է, քանի որ 7-րդ հոդվածի 1-ին պարբերությունը փոփոխելու առաջարկը համարվում է անընդունելի: Այդուհանդերձ, ԻՉԵԿ-ն առաջարկում է խմբագրել նախադասությունը՝ երաշխավորելու համար, որ այն անդամ պետություններում, որտեղ չամուսնացած անձինք կարող են որդեգրել, և եթե այդ անձինք ապրում են երեխայի կենսաբանական ծնողի հետ, վերջինիս իրավունքներն ու պարտականությունները պահպանվում են:

3. Ինչ վերաբերում է երեխայի և նրա կենսաբանական ընտանիքի միջև իրավահարաբերությունների դադարեցմանը, Մասնակից պետությունները կարող են բացառություն կատարել այնպիսի հարցերում, ինչպիսիք են երեխայի ազգանունը, ամուսնանալու կամ միությունը գրանցելու խոչընդոտները:

4. Մասնակից պետությունները կարող են սահմանել որդեգրման այնպիսի այլ տեսակներ նախատեսող դրույթներ, որոնց հետևանքները, սույն հոդվածի նախորդ պարբերություններով սահմանված հետևանքների համեմատ, ավելի սահմանափակ են:

Հոդված 12 – Որդեգրված երեխայի քաղաքացիությունը

1. Մասնակից պետությունները աջակցում են իրենց քաղաքացու որդեգրած երեխայի կողմից իրենց պետության քաղաքացիության ձեռքբերումը:

2. Որդեգրման հետևանքով քաղաքացիության կորուստ կարող է տեղի ունենալ, եթե երեխան ունի կամ ձեռք է բերում այլ քաղաքացիություն:

Հոդված 13 – Մահմանափակումների արգելքը

1. Նույն որդեգրողի կողմից որդեգրվող երեխաների թիվն օրենքով չի սահմանափակվում:

2. Օրենքը չի արգելում անձին երեխա որդեգրել միայն այն պատճառով, որ նա ունի կամ կարող է երեխա ունենալ:

Հոդված 14 – Որդեգրումը վերացնելը և անվավեր ճանաչելը

1. Որդեգրումը կարող է վերացվել կամ անվավեր ճանաչվել միայն իրավասու մարմնի որոշմամբ: Անհրաժեշտ է միշտ առաջնահերթ ուշադրություն դարձնել երեխայի շահերին:

2. Որդեգրումը կարող է վերացվել միայն օրենքով սահմանված լուրջ հիմքերով՝ մինչև երեխայի չափահաս դառնալը:

3. Անվավեր ճանաչելու դիմումը պետք է ներկայացվի օրենքով սահմանված ժամկետում:

Հոդված 15 – Այլ Մասնակից պետության դիմումը տեղեկություններ տրամադրելու մասին

Եթե սույն Կոնվենցիայի 4-րդ և 10-րդ հոդվածների համաձայն կատարվող ուսումնասիրությունները վերաբերում են այլ Մասնակից պետության տարածքում ապրող կամ ապրած անձանց, այդ Մասնակից պետությունը, տեղեկություն տրամադրելու մասին դիմումը ներկայացնելու դեպքում, անմիջապես միջոցներ է ձեռնարկում պահանջվող տեղեկության տրամադրումն ապահովելու համար: Յուրաքանչյուր պետություն նշանակում է ներպետական մարմին, որին պետք է ուղղվի տեղեկություն տրամադրելու մասին դիմումը:

Հոդված 16 – Հայրությունը (մայրությունը) որոշելու ընթացակարգը

Հայրությունը կամ, եթե առկա է նման ընթացակարգ, մայրությունը որոշելու նպատակով իրականացվող վարույթի դեպքում, որը հարուցվել է ենթադրյալ կենսաբանական հոր կամ մոր կողմից, որդեգրման վարույթը, հարկ եղած դեպքում, կասեցվում է, մինչև պարզ կդառնան հայրությունը (մայրությունը) որոշելու վարույթի արդյունքները: Հայրությունը (մայրությունը) որոշելու վարույթում իրավասու մարմինները գործում են արագացված կարգով:

Հոդված 17 – Անօրինական եկամուտ ստանալու արգելքը

Ոչ ոք չպետք է երեխայի որդեգրման հետ կապված գործունեությունից ստանա որևէ ֆինանսական կամ այլ տեսակի անօրինական եկամուտ:

Հոդված 18 – Առավել բարենպաստ պայմաններ

Մասնակից պետությունները պահպանում են որդեգրված երեխայի համար առավել բարենպաստ դրույթներ ընդունելու հնարավորությունը:

Հոդված 19 – Փորձաշրջանը

Մասնակից պետությունները կարող են պահանջել, որ մինչև որդեգրման կատարումը երեխան գտնվի որդեգրողի խնամքի տակ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է իրավասու մարմնին որդեգրման կատարման դեպքում նրանց ապագա հարաբերությունների վերաբերյալ իրատեսական գնահատական տալու համար: Այս համատեքստում անհրաժեշտ է առաջնահերթ ուշադրություն դարձնել երեխայի շահերին:

Հոդված 20 – Խորհրդատվությունը և որդեգրմանը հաջորդող ժամանակահատվածում ծառայությունները

Որդեգրողի թեկնածուներին, որդեգրողներին և որդեգրվող երեխաներին օժանդակության և խորհրդատվության ապահովման նպատակով պետական մարմինները երաշխավորում են որդեգրման հարցերով խորհրդատվության և որդեգրմանը հաջորդող ժամանակահատվածում ծառայությունների պատշաճ տրամադրումը և աջակցումը:

Հոդված 21 – Ուսուցումը

Մասնակից պետությունները երաշխավորում են, որ որդեգրման հարցերով զբաղվող սոցիալական ոլորտի աշխատողները որդեգրման սոցիալական և իրավական հարցերով համապատասխան ուսուցում անցնեն:

Հոդված 22 – Տեղեկությունների մատչելիությունը և հրապարակումը

1. Կարող են սահմանվել դրույթներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնելու որդեգրումը՝ չբացահայտելով որդեգրողի ինքնությունը երեխայի կենսաբանական ընտանիքին:

2. Պետք է սահմանվեն դրույթներ, որոնցով պահանջվում կամ թույլատրվում է, որ որդեգրման վարույթն անցկացվի դռնփակ նիստում:

3. Որդեգրված երեխային պետք է մատչելի լինեն իր ծագման մասին՝ իրավասու մարմինների տրամադրության տակ գտնվող տեղեկությունները: Եթե երեխայի կենսաբանական ծնողներն ունեն իրենց ինքնությունը չբացահայտելու իրավաբանորեն ապահովված իրավունք, ապա այնքանով, որքանով դա թույլատրելի է օրենքով, այն (ինքնությունը) պետք է մատչելի լինի իրավասու մարմնի համար, որպեսզի վերջինս որոշում կայացնի այդ իրավունքը չեղյալ

հայտարարելու և նրանց մասին տեղեկությունները հրապարակելու վերաբերյալ՝ հաշվի առնելով հանգամանքները և երեխայի ու նրա կենսաբանական ծնողների համապատասխան իրավունքները: Որդեգրված անչափահաս երեխային կարող է տրամադրվել համապատասխան կողմնորոշող խորհրդատվություն:⁶

4. Որդեգրողը և որդեգրված երեխան պետք է հնարավորություն ունենան ստանալու երեխայի ծննդյան թիվն ու վայրը հավաստող տեղեկությունների մասին՝ պետական արխիվից քաղվածք պարունակող փաստաթուղթ, որը, սակայն, հստակորեն չի բացահայտում որդեգրման փաստը կամ երեխայի կենսաբանական ծնողների ինքնությունը: Մասնակից պետությունները կարող են որոշել չկիրառել այս դրույթը սույն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում նշված որդեգրման այլ տեսակների նկատմամբ:

5. Հաշվի առնելով անձի՝ իր ինքնության և ծագման մասին տեղեկացված լինելու իրավունքը՝ որդեգրմանն առնչվող համապատասխան տեղեկությունները հավաքվում և պահվում են որդեգրման գործընթացի ավարտից հետո առնվազն հիստուն տարի:

6. Պետական արխիվները պետք է պահպանվեն և, ցանկացած դեպքում, դրանց բովանդակությունը պետք է վերարտադրվի այնպես, որ կանխվի օրինական շահ չունեցող անձանց կողմից որևէ անձի՝ որդեգրված լինելու և, եթե այդ տեղեկությունները հրապարակվել են, որդեգրվածի կենսաբանական ծնողների ինքնության մասին տեղեկության ձեռքբերումը:

Մաս III – Եզրափակիչ դրույթներ

Հոդված 23 – Կոնվենցիայի գործողությունը

1. Մասնակից պետությունների դեպքում սույն Կոնվենցիան փոխարինում է Երեխաների որդեգրման մասին Եվրոպական կոնվենցիային, որը բացվել է ստորագրման համար 1967 թվականի ապրիլի 24-ին:

2. Սույն Կոնվենցիայի Մասնակից պետության և 1967 թվականի կոնվենցիայի Մասնակից ու սույն Կոնվենցիան չվավերացրած պետության միջև հարաբերություններում շարունակում է կիրառվել 1967 թվականի կոնվենցիայի 14-րդ հոդվածը:

Հոդված 24 – Ստորագրելը, վավերացնելը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և անդամ չհանդիսացող այն պետությունների կողմից ստորագրման համար, որոնք մասնակցել են դրա մշակմանը:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

3. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրվանից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրվանից, երբ երեք ստորագրող պետությունները հայտնել են Կոնվենցիայով պարտավորված լինելու իրենց համաձայնության մասին՝ սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթների համաձայն:

4. Առաջին պարբերությունում նշված ցանկացած պետության համար, որը հայտնում է սույն

⁶ Թիվ 266 (2007) եզրակացության 6.5 պարբերություն. Խորհրդարանական վեհաժողովի՝ 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության ձևակերպումը փոփոխելու առաջարկն անընդունելի է համարվում, քանի որ, երեխայի ծագման մասին տեղեկություններ ստանալիս և դրանք հրապարակելիս, այն չի ապահովում երեխայի և ծնողների շահերի հավասարակշռությունը:

Կոնվենցիայով պարտավորված լինելու իր համաձայնության մասին, Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 25 – Կոնվենցիային միանալը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն կարող է, Կողմերի հետ խորհրդակցելուց հետո, հրավիրել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող և կոնվենցիայի մշակմանը չմասնակցած ցանկացած պետության միանալու սույն Կոնվենցիային՝ Եվրոպայի խորհրդի կանոնադրության հոդված 20 «դ»-ով նախատեսված ձայների մեծամասնությամբ կայացված որոշման և Նախարարների կոմիտեում ներկայացված Մասնակից պետությունների ներկայացուցիչների միաձայն քվեարկության հիման վրա:

2. Ցանկացած միացող պետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից Կոնվենցիային միանալու մասին փաստաթղթերը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 26 – Տարածքային կիրառությունը

1. Ցանկացած պետություն, ստորագրման ժամանակ կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց վրա տարածվում է սույն Կոնվենցիան:

2. Ցանկացած Մասնակից պետություն կարող է, վերը նշված գործողություններից հետո ցանկացած ժամանակ, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ սույն Կոնվենցիայի գործողությունը տարածել հայտարարությունում նշված ցանկացած այլ տարածքի վրա, որի արտաքին հարաբերությունների համար այն պատասխանատու է կամ, որի անունից այն լիազորված է պարտավորություններ ստանձնել: Նման տարածքի համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ հայտարարության ստացման օրվանից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

3. Վերը նշված երկու պարբերությունների համաձայն արված ցանկացած հայտարարություն, դրանում նշված որևէ տարածքի մասով, կարող է չեղյալ հայտարարվել՝ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Հայտարարությունը չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից այդ մասին ծանուցումն ստանալու օրվանից հետո եռամսյա ժամկետի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Հոդված 27 – Վերապահումները⁷

1. Սույն Կոնվենցիայի վերաբերյալ վերապահումներ չեն կատարվում, բացառությամբ 5-րդ հոդվածի 1«բ» պարբերության, 7-րդ հոդվածի 1«ա»«ii» և 1«բ» պարբերությունների և 22-րդ հոդվածի 3-րդ պարբերության դրույթների:

⁷ Թիվ 266 (2007) եզրակացության 6.6 պարբերություն. Խորհրդարանական վեհաժողովն առաջարկել էր 27-րդ հոդվածի բոլոր պարբերությունները փոխարինել հետևյալ բառերով՝ «Սույն Կոնվենցիայի վերաբերյալ վերապահումներ չեն կատարվում»: Այդ առաջարկն ընդունելի չի համարվում, քանի որ 2007 թվականի փետրվարի 26-ից մարտի 1-ը ԻՅԵԿ-ի 82-րդ լիազումար նիստում Կոնվենցիայի նախագծի տեքստը վերջնական տեսքի բերելու ժամանակ մի շարք պետություններ, Կոնվենցիայի ընդունման դեպքում դրան միանալու մեծ հետաքրքրություն ցուցաբերելով, պնդեցին, որ այն ունենա որոշակի ճկունություն և սահմանափակ թվով վերապահումների հնարավորություն ընձեռի՝ հակառակ դեպքում անհնարին համարելով Կոնվենցիային իրենց միանալը: